ԳՐԱԲԱՐԻ ԴԱՐՁՎԱԾՆԵՐԸ

ԳԵՎՈՐԳ ԹՈՍՈՒՆՅԱՆ

Բառակապակցությունը նյութական իմաստ ունեցող երկու և ավելի բառերի կապակցություն է, որի կազմում բաղադրիչները միմյանց հետ կապվում են քերականորեն և իմաստով: Օրինակ՝ մատուցանել զկերակուրս, արեգակն արդար *և այլն: Իսկ դարձվածքը վերաիմաստավորված բառակապակցություն է: Օրինակ՝* անտես առնել, յակն անկանել, ի գլուխ ելանել *և այլն: Ինչպես բառակապակցությունը, այնպես էլ դարձվածքը նախադասությունից տարբերվում են նրանով, որ ամփոփ միտք չեն արտահայտում, այսինքն՝ դրանք չունեն ստորոգում, իսկ նախադասությունն ունի, ինչպես, օրինակ,* արեգակն արդար և արեգակն է արդար, *որոնցից առաջինը բառակապակցություն է, իսկ երկրորդը՝ նախադասություն:*

Դարձվածքը սովորաբար ունենում է փոխաբերական իմաստ, որը նրան տալիս է պատկերավորություն, և դրա հիման վրա այն ունենում է հուզաարտահայտչական նշանակություն: Դրանով էլ պայմանավորված՝ դարձվածքն ունենում է ոճական լայն կիրառություն:

Դարձվածքների առաջացման հիմքում ընկած են զանազան երևույթներ, հասկացություններ միմյանց հետ համեմատելը, զուգորդելը, հակադրելը և այլն: Եվ ըստ առաջացման՝ դարձվածքները նախ ձևավորվում են ժողովրդախոսակցական լեզվում որպես ազատ բառակապակցություններ և ապա անցնում են գրական լեզու՝ վերածվելով դարձվածային միավորի: Հետևյալ զուգադիր նախադասություններից առաջիններում գործածված են ազատ բառակապակցություններ, իսկ երկրորդներում՝ դարձվածքներ, այսպես՝ «Ելանէր *քահանայապետն Աստուծոյ Յակոբ* ի գլուխ *լերինն Ընծաքիարս» (Բուզ., էջ 22*): *«Հրաման Պարսից թագավորին* ի գլուխ ելանէր» *(Փարպ., էջ 25*), *այսինքն՝ կատարվում էր: «Եւ փարիսեցիքն և ամենայն հրեայք եթէ ոչ բռնալիր* լուանան զձեռս, *հաց ոչ ուտեն. քանզի ունին զաւանդութիւն ծերոցն»* (*Մարկ. Է. 3*): *«Եւ տեսեալ Պիղատոսի՝ թէ ոչ ինչ օգնէ, այլ առաւել խռստովանութիւն լինի, առեալ զջուր՝* լուաց զձեռս *առաջի ժողովրդեանն՝ և ասէ. քաւեալ եմ ես յարենէ արդարոյդ այդորիկ, դուք գիտասջիք»* (*Մատթ., ԻԷ. 24*), *այսինքն՝ անմեղ ձևացաւ, մի կողմ քաշվեց: «Դարձեալ* եդ ձեռս *ի վերայ աչաց նորա, և եբաց, և տեսանէր»* (*Մարկ., Ը.* 25*): «*Զձեռս *վաղվաղակի յուրուք վերայ* մի՛ դնիցես, *և մի՛ կցորդ լինիցիս մեղաց օտարաց. զանձն քո սուրբ պահեսջի՛ր» (Ա. Տիմ., Ե. 22), այսինքն՝ չձեռնադրես:*

Այդպես էլ ուղղակի իմաստով գործածվելուց բացի, որպես դարձվածք կարող են հանդես գալ հետևյալ բառակապակցությունները՝ յաչաց հանել *(աչքից գցել),* ձայն բարբառոյ յանապատի *(ասողին լսող չկա),* ամբառնալ զգլուխ՝ զինքն

(ապստամբվել, ըմբոստանալ), ձեռն դնել *(ստորագրել, ձեռնադրել),* յոտն կալ *(վիճակը բարելավել) և այլն:*

Դարձվածքները կարելի է դասակարգել տարբեր սկզբունքներով, այսպես՝ ա. ըստ գերադաս և ստորադաս բաղադրիչների խոսքիմասային պատկանելության, բ. ըստ բաղադրիչների միմյանց հետ ունեցած կապակցելիության, գ. ըստ բաղադրիչների քանակի և այլն:

Ըստ խոսքիմասային պատկանելության բառակապակցությունները կարող են լինել գոյականական, բայական, ածականական, մակբայական, թվականական և այլն: Օրինակ՝ ակն արևու, մատուցանել զկերակուրս, կարի հզօր, աւագ յամենեցունց, իբր հինգ հազար, օն անդր *և այլն:*

Բառակապակցության բաղադրիչները միմյանց հետ կարող են կապվել տարբեր կերպ, և ըստ այդ կապի սերտության կարող են լինել ազատ ու կայուն կապակցություններ: Օրինակներ ազատ բառակապակցությունների վերաբերյալ՝ արևելյան ցող, առաքել հրովարտակ, արքայական հրաման, քաղաքէ ի քաղաք, ազնիւ մարդ, հաւատարիմ բարեկամ, երկու երկու *և այլն: Գրաբարում գործածության բարձր հաճախականություն ունեն կայուն կապակցություններն ու դարձվածքները, որոնց բաղադրիչների կապն ավելի սերտ է, այսինքն՝ բաղադրիչները միմյանցից անբաժանելի են և ունեն իմաստային միասնություն, օրինակ՝* ազգի ազգի *(տարբեր, զանազան կերպով),* յականէ յանուանէ *(անձամբ, անուն առ անուն),* Տէր զօրութեանց (*Աստուած),* Գիրք արարածոց, արքայից արքայ *և այլն: Է՛լ ավելի սերտ է դարձվածքների բաղադրիչների կապը, այսպես՝* անտես առնել (*արհամարհել, բանի տեղ չդնել*), արմատախիլ առնել (*ոչնչացնել, արմատով հանել*), զան հարկանել (*ծեծել*), ի կիր առնուլ (*կիրառել, գործածել*), նախանձուկս արկանել (*նախանձել*), ի մտի դնել (*մտադրվել*), ընդ առաջ ելանել (*դիմավորել, մեկին ընդառաջ գնալ*)*: Բնագրային օրինակ՝* «Ընդ առաջ ելանէր *նմա իշխանն Գողթան»* (*Կոր., էջ 40*):

Ըստ բաղադրիչների քանակի՝ դարձվածքները լինում են երկանդամ կամ սովորական և բազմաբաղադրիչ կամ ընդարձակ: Երկբաղադրիչ դարձվածքների օրինակներ՝ ազդ առնել *(հայտնել, տեղեկացնել),* ածել զհերս *(սափրել, ածիլել),* աղօթս առնել *(աղոթել),* ապախտ առնել *(անտեսել, զանց առնել),* գուն գործել *(ջանալ, աշխատել) և այլն: Որպես նմուշ բերենք բնագրային մեկ օրինակ՝ «Առաւել ևս փութայր*, գուն եդեալ *յորդորելով զամենեսեան առ ի բարեացն քաջալերութիւն» (Բուզ., էջ 12):*

Համեմատաբար ավելի քիչ ենք հանդիպում բազմաբաղադրիչ դարձվածքների, եղածներն էլ հիմնականում եռանդամ բառակապակցություններ են, օրինակ՝ ընդ բանիւ առնել (*բանադրել),* գալ ի կուսական արգանդ *(ծնվել կույսից),* երկիւղ մահու ի վերայ դնել *(մահով սպառնալ),* ընդունել ի սուրբ աւազանէ *(կնքահայր լինել),* ի չափու ունել զանձն *(չափը պահել, չափից չանցնել). բնագրային օրինակ՝ «Ո՞ ոք ի նոցանէ* զանձն ի մահ դնելով *գուն գործիցէ» (Եղ., էջ 96):*

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բազմաբաղադրիչ դարձվածքները ոչ միայն քիչ են, այլ եղածներն էլ ունեն սակավ գործածություն:

Դարձվածքների կազմում գերադաս բաղադրիչի դերում հիմնականում հանդես են գալիս գոյականները և բայերը: Հարկ է նշել, որ դրանք ծագման տեսակե-

տից նախ գործածվել են ժողովրդախոսակցական լեզվում և ապա գրականության միջոցով թափանցել գրական լեզու: Ստորև կանգ կառնենք այն դարձվածքների վրա, որոնց գերադաս անդամն արտահայտվում է մարմնի մասերի անուններով՝ ակն, աչք, բերան, գլուխ, ծունկք, *ձեռն,* ոտն *և այլն:*

Ակն. *յականէ յանուանէ (անձամբ), ակն առնուլ (աչառել, երեսպաշտություն անել), ակն ունել (ակնկալել, հույս ունենալ), ակն ի ճանապարհ (սպասել, աչքը ճանապարհին), ակն ածել (պատկառել, ամաչել, հոգ տանել), ակն դնել (աչք տնկել, հետամուտ լինել), ակն կամ զակն տալ (աչքով տալ, նայել), յակն գալ (մեկի աչքին երևալ, հաճելի լինել), յակն անկանել (աչքի ընկնել, տեսանելի դառնալ), յակն արկանել* (երևան գալ, թեթևակի նայել), *զակն արկանել (աչքից գցել, անտարբեր լինել), առ ակն գալ (աչքի առջև մնալ), ըստ ակն անկանել (աչքից փախչել, անհետանալ), ընդ ակամբ հայել* (*խեթ նայել, կասկածել, արհամարհել*), *ընդ ակամբ լինել* (*անհաճո լինել մեկին*), *ընդ ակն խոցել* (*մեկին բացահայտ կերպով վիրավորել*) *և այլն: Բնագրային օրինակներ՝ «Ինքեանք յարութեան* ակն *զիա՞րդ* ունիցին» (*Եզն., էջ 143*): *«Թագաւորեցոյց ... զԱրշակ,* ակն ածելով *ի զօրացն Հայոց»* (*Խոր., էջ 277*): *«Միանգամայն և* ակն ունէր *դիւթութեամբ վհուկութեան իւրոյ կենդանացուցանել զԱրայ» (նույն տեղում, էջ 52):*

Աչք. *այս գերադաս անդամով կազմված դարձվածքները համեմատաբար քիչ են, այսպես՝ զաչս ամբառնալ՝ համբառնալ (վերև նայել), աչս արձակել՝ արկանել՝ բերել (աչքերը հառել, աչք տնկել, ցանկանալ, ձգտել), յաչաց հանել՝ ելանել (աչքից գցել, աչքից ընկնել), ըստ աչս դատել (աչառությամբ՝ հենց այնպես դատել), կալեալ լինել աչաց (տեսածը չճանաչել), կալ աչաց (չտեսնել, կուրանալ), յաչս բերել (երևակայել, մտածել), յաչս դնեմ* (*արհամարհել, համարձակվել*), *առ աչօք (1. լոկ աչքին երևալով, կարծիքով, ոչ իրական, երևակայելով: 2. աչքի առաջ, դեմառդեմ) և այլն: Բնագրային օրինակներ՝ «Զոր հանապազ զնոսա* յաչաց հանէին» *(Եղ., էջ 143)*: «Հանել *զնա* յաչաց *թագաւորին Պարսից» (Բուզ., էջ 208):*

Բերան. *այս գերադաս անդամով կազմված դարձվածքներն ընդամենը մի քանիսն են, ինչպես՝ ի մի՝ ընդ մի բերան (միաձայն, միաբերան), ի բերանս լինել (պապանձվել, լռել), բերան ի բերան (բերնեբերան, ծայրեծայր, դեմ-դիմաց), բերան ի վայր // ի վերայ բերանոյ (բերանքսիվայր, բերանի վրա), ի բերանս լինել՝ հարկանել՝ տապալել (ընկնել բերանի վրա), ի բերան փողոտել (խեղդել, սպանել*), *բանս ի բերան դնել ումեք (մեկին խոսեցնել, թելադրել, սովորեցնել) և այլն: Բնագրային օրինակներ՝ «Ապա և նոքա* ընդ մի բերան *ասէին ընդ նմա» (Բուզ., էջ 72): «*Բերան ի բերան *...ընդ բարեկամի իւրում ընդ Մովսիսի խօսէր» (Եզն., էջ 95):*

Գլուխ. *գրաբար մատենագրության մեջ հանդիպում ենք մի քանի դարձվածքների՝ կազմված* գլուխ *գերադաս բաղադրիչով, այսպես՝ ի գլուխ հանել՝ տանել՝ ածել՝ բերել* (*ավարտել, վերջացնել, գլուխ հանել*), *ի գլուխ ելանել՝ հասանել՝ գալ՝ երթալ (ավարտվել, վերջանալ, գլուխ գալ, կատարվել), անկանել զգլխով (հանկարծակի հարձակվել, վրա հասնել), կալ ի գլուխ (առաջնորդել, գլուխ կանգնել), արկանել զոք զգլխով ուրուք (մեկին ուրիշի ձեռքը գցել), դնել գլուխ ի կշիռս (մահվան վտանգի ենթարկվել), գլուխ մի բանի հարցանել (հարցնել մի կետ, էական մի մաս), ամ մի ի գլուխ (մի ամբողջ տարի): Բնագրային օրինակներ՝ «Եւ*

կատարեալ ելանէր ի *գլուխ բան Փրկչին Քրիստոսի» (Փարպ., էջ 170): «Ոչ մի ինչ իրք և գործք աշխարհիս Հայոց* երթեալ էին ի գլուխ*» (նույն տեղում, էջ 58): «Զոր վճարեալ* եհան ի գլուխ *ազդեցութիւն վերնոյն» (նույն տեղում, էջ 130): «Եւ կատարեալ* տանիս ի գլուխ *զիրս գործոյս աշխատութեան» (նույն տեղում, 144): «Հասանէր ի գլուխ իշխանութեանն Սիւնեաց քաջն Սիսականն Վասակ» (Կոր., էջ 62):*

Ծունր. *գրաբարագիր հեղինակների երկերում դարձվածքների մի քանի օրինակ ենք գտնում՝ կազմված* ծունր, ծունկք, գուռ *համանիշ գերադաս բաղադրիչներով, ինչպես՝ կալ ի վերայ ծնկաց (ծնրադրել, ծնկի գալ), ծունր արկանել՝ դնել՝ կրկնել՝ խոնարհեցուցանել՝ մատուցանել // ի ծունր իջանել // ի գուռս կալ՝ իջանել՝ անկանել՝ հարկանել (ծնրադրել, ծնկի գալ, ծնրադիր երկրպագել, ծնկի գալ), ծունր կապել* (*հացաբույսերի ցողունների միացումը՝ հանգույցը): Բնագրային օրինակներ՝ «Կայր ի գուռս ի վերայ ծնկաց» (Գ Թագ., Ը. 54): «Եդեալ* ծունր *ամենեցուն առ Աստուած ... խնդրեալ վասն թագաւորին բժշկութեան» (Ագաթ., էջ 401): «Յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն* ծունր կրկնեսցի *երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց» (Եղ., էջ 110): «Զի յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն* ծունր կրկնեսցի *(Փիլիպ., Բ. 19): «Մատեաւ այր մի՝* ի ծունր *իջանէր և ասէր. Տէ՛ր, ողորմեա՛ց որդւոյ իմում» (Մատթ., ԺԷ. 14):* «Ի գուռս իջեալ *ամենայն ժողովրդոց» (Յուդիթ, Զ. 14): «Հատն մերկ յերկիր անկեալ՝ բուսեալ...* կապեալ ծունր*... բազումս առեալ ի շահեկանութիւն սերմանելեացն պատրաստէ (Ագաթ., էջ 263):*

Ձեռն. *ավելի հաճախ ենք հանդիպում այս գերադաս բաղադրիչով կազմված դարձվածքների, այսպես՝ ձեռն արկանել (բռնել, ձեռնարկել, սկսել, կամենալ մեկին վնասել), ձեռն ի գործ արկանել՝ առնել (ձեռնարկել, սկսել, ձեռք զարկել), ի ձեռն առնուլ (իր ձեռքն առնել, բռնել, ունենալ, տիրել, կրել), ի ձեռն տալ (ընձեռել, շնորհել, տալ,), ձեռն դնել (ստորագրել, ձեռնադրել), ձեռն տալ (օգնել, զիջել, խոնարհվել, ընձեռել, շնորհել, տալ, հարմար լինել), ձեռն՝ ձեռս յանձին հարկանել (հույսն իր վրա դնել, ինքնավստահ լինել), ձեռն ի ձեռն (սեփական ձեռքով, ձեռքից ձեռք, անմիջապես), ձեռն ի գլուխ կամ ձեռս ի գլուխ (ողբալ՝ գլուխը ծեծելով՝ ծեծկվելով՝ վա՛յ տալով), ձեռս ի կապ (ձեռքերով բարև բռնած), զձեռանէ առնուլ՝ ունել՝ ձգել (ձեռքից բռնել, տալ, ուղեկցել, առաջնորդել), ձեռս բառնալ (ձեռք քաշել, հրաժարվել), զձեռս տալ (անձնատուր լինել, զիջել, ներել), ձեռն տալ աղջկան (նշանվել) և այլն: Բնագրային օրինակներ՝ «Ձեռն* արկեալ *գրել կտակ յաւիտենական ... հրամայեաց» (Ագաթ., էջ 204): «Ամենայն ոք* ձեռն ի գործ արկեալ *... գործէին զգործն» (նույն տեղում, էջ 393): «Եւ մեռանի ինքն ... զառաքելութեան իւրոյ զշնորհս* ի ձեռն տալով *նմա» (Խոր., էջ 212) :*

Գրաբար մատենագրության մեջ հանդիպում ենք այնպիսի դարձվածքների, որոնց գերադաս անդամներն արտահայտվում են ձեռ, ձեռն *և* ձերբ *հիմքերով կազմված բարդ բառերով, այսպես՝ ձեռակոծ առնել (ձեռքերով՝ բռունցքներով ծեծել), ձերբակալ՝ ձեռնակալ առնել (բռնել, ձերբակալել), ձեռնաձիգ լինել (ձեռքը մեկնել՝ երկարացնել), ձեռնամերձ լինել* (*ձեռք տալ, հպվել), ձեռնամուխ լինել (միջամուխ լինել, սկսել, ձեռնարկել), ձեռնատուր լինել (հանձնվել, անձնատուր լինել), ձեռներէց լինել (առաջ ընկնել, հանդգնել, համարձակ՝ հանդուգն լինել),*

ձեռներէց առնել (գլխավոր նշանակել՝ դնել), ձեռնթափ լինել (գործը կիսատ թողնել, լքել-հեռանալ, հրաժարվել), ձեռնկալու լինել (օգնել, աջակցել, պաշտպանել), ձեռնհաս լինել (կարողանալ, ի վիճակի լինել, ուժը պատել, զորել), ձեռնպահ լինել (խուսափել, զգուշանալ, չմոտենալ), ձեռնտու լինել (ձեռք տալ, օգնել, օգտակար լինել) և այլն: Բնագրային օրինակներ՝ «Մի՛ լինիր ձեռնկալու *մեղաւորին» (Սիրաք, ԺԲ. 4): «Ձեռնկալո՛ւ լեր արքային» (նույն տեղում, ԻԹ. 12): «Էր որ* ձեռնատու *լինէր քեզ» (Եսայի, ԾԱ. 18): «Որ* ձեռներէց *լինի տարապարտուց» (Առակք, ԺԱ. 21): «Որ* ձեռնամուխ *լինի տարապարտուց» (նույն տեղում, ԺԶ. 5): «*Ոչ ինչ էր ձեռնհաս *առ նոսա (Երեմիա, Ը. 5): «*Ձերբակալ արար *զերկուս թագաւորսն» (Դատ., Ը. 12):*

Ոտն. *գրաբարագիր հեղինակների երկերում ավելի հաճախ ենք հանդիպում* ոտն *գերադաս անդամով կազմված դարձվածքների, այսպես՝ ոտն առնուլ (համարձակվել, իշխել), ոտն արկանել՝ հարկանել կամ ընդ ոտն հարկանել (արհամարհել, անտեսել, ոտքով խփել), յոտն կալ (կանգնել), առ ոտն կամ առ ոտս (մոտը, մոտերը, առընթեր), ոտն ոտն կամ ոտն առ ոտն (քայլ առ քայլ, կամաց-կամաց, աստիճանաբար, հետզհետե), առնել ընդ ոտս (արհամարհել, ոտնատակ տալ), ընդ ոտս անկանել (ոտքերն ընկնել, արգելք լինել), յոտն ի մատն յառնել (ոտքերի վրա կանգնել՝ լավ տեսնելու համար), անկանել առ ոտս (ոտքերն ընկնել, թախանձագին խնդրել՝ աղերսել), առնել ընդ ոտս (ոտնատակ անել, արհամարհել), առ ոտս կալ (առաջը կանգնել, ներկա լինել), զոտս հատանել (անհետ լինել, անհետանալ, վերանալ), ընդ ոտս անկանել (ոտքերին դեմ առնել, ոտքերը փաթաթվել), ընդ ոտս լինել (արգելք՝ խոչընդոտ լինել) և այլն: Բնագրային օրինակներ՝ «Մի՛ ումեք լիցի խէթ ու խուլ այնուհետև* ընդ ոտս անկանել *և խափան առնել» (Ագաթ., էջ 403): «Արդէն* յոտն կացեալ *վաղվաղակի շարժեաց զպարանն» (նույն տեղում, էջ 115): «Որ* ընդ ոտն եհար *զտունս Իսրայէլի» (Յուդիթ, ԺԴ. 5):*

Գրաբար մատենագրության մեջ հանդիպում ենք նաև ոտն *գերադաս անդանով կազմված բարդ բառերով դարձվածքների, օրինակ՝ ոտնկռիւ լինել (ոտքի կռվան լինել, ոտք դնելու տեղ լինել), ոտնհար լինել (ընկածին ծաղրել, ծաղրի ենթարկվել), ոտնկոխ լինել (ոտք դնելու տեղ գտնել, տրորել), ոտնակոտոր առնել (ոտքերը ջարդել), ոտնափոխ կամ ոտնփոխ լինել (քայլել, գնալ, վեր կենալ) և այլն: Բնագրային օրինակներ՝* «Ոտնհար եղէց՝ *յորժամ գայցէ ձեզ նեղություն» (Առակք, Ա. 26): «*Ոտնհար լիցին *ի վերայ փառաց նորա» (Օսէէ, Ժ. 5):*

Վերոհիշյալ համառոտ շարադրանքից կարելի է անել հետևյալ եզրակացությունները:

1. Դարձվածքների կազմում գերադաս անդամի դերում հիմնականում հանդես են գալիս մարմնի առանձին մասերի անվանումները՝ ակն, աչք, բերան, գլուխ, ծունր, ձեռն, ոտն *և այլն:*

2. Գրաբարում հանդիպում ենք այնպիսի կայուն բառակապակցությունների, որոնք գործածվել են և՛ ուղղակի, և՛ փոխաբերական իմաստով, օրինակ՝ ելանել ի գլուխ, լուանալ զձեռս, յոտն կալ *և այլն:*

3. Գրաբար մատենագրության մեջ գործածության բարձր հաճախականություն ունեն ակն, ձեռն, ոտն *գերադաս անդամներով կազմված դարձվածքները:*

4. Դարձվածքների կազմում մեծ դեր են խաղում նախդիրները:

5. Գրաբարի դարձվածքների մեծ մասը նույնությամբ կամ որոշ փոփոխությամբ, հիմնականում կցական բարդության վերածված, լեզվի պատմության ընթացքում փոխանցվել են լեզվի հաջորդ փուլերին՝ միջին հայերենին և ապա աշխարհաբարին, այսպես՝ աղօթս առնել – աղօթել,ակն ածել – ակնածել, զմտաւ ածել – մտածել, ի կիր արկանել – կիրարկել, բողոք արկանել – բողոքարկել, ի գործ ածել – գործածել, անտես առնել – անտեսել, աչս առնուլ – աչառել, գան հարկանել – գանահարել,ի մտի դնել– մտադրվել, ձեռն արկանել – ձեռնարկել, ձերբակալ առնել – ձերբակալել, ոտն հարկանել – ոտնահարել *և այլն:*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Ագաթանգեղոս. Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909:
2. Առակք:
3. Աւետարան Մատթէոսի:
4. Աւետարան Մարկոսի:
5. Դատաւորաց:
6. Եզնիկ Կողբացի. Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:
7. Եղիշէ. Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957:
8. Թագաւորութեանց, Գ:
9. Կորիւն. Վարք Մաշտոցի, Երևան, 1941:
10. Ղազար Փարպեցի. Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904:
11. Մարգարէութիւնք (Եսայի, Երեմիա, Սիրաք, Օսէէ):
12. Մովսես Խորենացի. Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913:
13. Յուդիթ:
14. Պետրոսյան Հ. Ջ. Հայերենագիտական բառարան, Երևան, 1987, «Դարձվածք» բառահոդվածը:
15. Պողոս առաքեալ. Թուղթք առ Տիմոթէոս, առ Փիլիպեցիս:
16. Փավստոս Բուզանդ. Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:

ФРАЗЕОЛОГИЗМЫ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА

ГЕВОРГ ТОСУНЯН

Р е з ю м е

Фразеологизм – это сочетание двух или более слов, которое имеет переносный смысл. В дренеармянском были распространены такие фразеологические единицы, в составе которых главными компонентами являются соматические слова: *ակն, աչք* (глаз), *բերան* (рот), *գլուխ* (голова), *ծունր* (колено), *ձեռն* (рука), *ոտն* (нога) *և այլն.* В образовании фразеологизмов большую роль играют и предлоги.